



“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԲ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԻԵ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՄԱՐՏ 1, 1896

ԹԻՒ 3



ՀՈՎԻՒՆ ԻՆՍՏՐԱՆՍ ԳՐԱՅ

Թեան կարօտ, վասն զի շատ սկար և անզօր են: Քրիստոս զիտէր այս բանը երբ խօսեցաւ կորսուած ոչխարը փնտռելու վրայով, որուն համար հովիւը ամբողջ հօտը կը թողու և բլուրներուն վըրայ կը պտրտի:

Այս պատկերը կը ներկայացնէ իտալացի հովիւ մը որ իր հօտը փարախ կը բերէ իրիկուան մօտ երբ շուքերը կ'երկնան: Ինք և իր շունը ոչխարները կանչած և փնտռած են մինչև որ գտած են ամէն մէկ թափառող մուրրող ոչխար և ամէնքն ալ ճամբայ ելած են դէպ ի տուն: «Մնոնց առջևէն կ'երթայ, ու ոչխարները իր ետևէն կ'երթան, ինչու որ անոր ձայնը կը ճանչնան»: Յովհ. Ժ. 4: Այսօր դառնուկներէն մէկը մուրրելով հեռացաւ, և Տոնալտ երկար ատեն փնտռելու ստիպուեցաւ: Այս բանին վրայ կը մտածէ քալած ժամանակը, և իր խորհուրդները ետ կ'երթան Քրիստոսի՝ կորսուած ոչխարին վրայով խօսած խօսքերուն:

«Կրնամ տեսնել» կ'ըսէ, «այդ կորսուածը ետ բերելու ատեն», թէ Բարի Հովիւը ինչ կը զգայ երբ մեղաւորները ապահովութեամբ փարախ կը բերէ:

ՈՉԽԱՐՆԵՐՈՒՆ ՀՕՏԸ ՓԱՐԱԽ ԲԵՐԵԼ Ամենէն ազնիւ բնութիւններէն մէկն է քաղցրութիւն դէպ ի սկար և անօգնական եղողները: Այն մարդը կամ մանուկը որ պարապ տեղը կը փնտռէ

կը նեղէ անպաշտպան կենդանի մը, կամ երբեք հասկցած չէ թէ մեղք է այդ բանը, և կամ չար սիրտ ունի: Բոլոր կենդանիներուն մէջ ոչխարը և գառնուկն են ամենէն աւելի օգնու-

Տարակոյս չունիմ թէ Նա զիս փնտռած է շատ անգամ, բայց ես աւելի կամակոր եղայ քան այն ոչխարին պէս մուրրեալ: Իր զարմանամ որ նա այսքան երկար ժամանակ համ-

բերած և սպասած է ինձի, բայց ուրախ եմ որ վերջապէս գտաւ զիս :

«Հայիւք եր ոչխարն,
Եւ Հայրք եր որդին
Ազատեալս համար
Ամէն ճիգ յանձն առին :
Մահուան մտ զիս գըտան
Տեկար, ծարաւ, անյոյս :
Ձիս սովամահ տեսան,
Եւ գըթացան հոգւոյս :»


ՄԱԳԻԱՂԱ

Գիտենք թէ մեր Տէրոջ ներկայութիւնը այս տեղին մէջ՝ նուիրական բարա զայն, վասն զի կը կարդանք թէ Յիսուս չորս հազարը հրաչքով կերակրելէն ետքը «նաւը մտաւ ու Մագդաղայի սահմանները եկաւ :»

Տեղին անունը՝ մեզի կը յիշեցնէ թէ Մարիամ Մագդաղենացիին հայրե :

Ճանապարհորդը մինչ կը կանգնի Մագդաղայի աւերակներուն մէջ, և կը նայի աղաոտ տնակներուն և խորճիթներուն վրայ, մտքին կը զարնէ սախորհուրդը թէ այս կնոջ, Մարիամ Մագդաղենացիին, միջոցաւ յիշեալ տեղին անունը ֆրիստոնեայ ազգաց բոլոր լեզուներուն մէջ մուտ գտած է : Այսպէս, աշխարհի մէջ հոչակուած է անունն այնպիսի կնոջ մը որ ջանաց որչափ կարելի էր առանց ցոյցի ընել իր ծառայութիւնը :

Մագդաղենացիին անունը կը կրէ փարիզի ամենէն հոյակապ եկեղեցիներէն մին :



ԱՂԵԿ ՊՏՈՒՂ ԶԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԿԵՐՊԸ
Երբեք չենք կրնար ըսել թէ խընձորի սերմ մը ի՞նչ տեսակ խնձոր

գըլունները ամբողջ կտրելով, ամէն մէկուն վրայ կը պատուաստեն իրենց ուզած բարունակները (թարմ ճիւղ) և այսպէս մէկ կարգը կ'ըլլայ մէկ տեսակ ընտիր խնձոր, երկրորդ կարգը ուրիշ ընտիր տեսակ մը, երրորդ կարգը ուրիշ մը, ևն. : Փոքրիկ ծառերէն ոմանք անտարակոյս շատ այդուր խընձոր կու տան առանց պատուաստելու, բայց ապահով ըլլալու համար՝ զանոնք ամէնքն ալ կը պատուաստեն :

Մարդոց մէջ ալ այնչափ տարբերութիւններ կան որչափ խնձորի ծառերուն մէջ : Ոմանք թթու են, ոմանք կոշտ և ծուռումուռ : Ոմանք շատ մը աւելի սիրուն են և հաճելի, բայց երբեք չենք կրնար վստահ ըլլալ թէ մարդ մը կրնայ շիտկուիլ, բարի ըլլալ մինչև որ Աստուծոյ Հոգւոյն զօրութիւնովը չփոխուի, չնարոգ ուի : Այսպէս Աստուած իր ժողովրդին սիրտերուն մէջ կը անկէ նոր բնութիւն մը, այնպիսի բան մը՝ զոր անոնք առաջ ո՛չ գիտէին, ո՛չ կը զգային : Այսպէս Աստուծոյ յաւիտենական կեանքը կը մնայ անոնց մէջ, և կ'ըլլան նոր ստեղծուած ֆրիստոս Յիսուսով : Ծառերը պատուաստուելէն ետքը կրնան մշակուիլ, և մենք կրնանք զանոնք յօտել (պարտաբար), կրնանք անոնց բոլորտիքը փորել և օգնել անոնց պտղաբեր ըլլալուն : Բայց մինչև որ այս պատուաստը չըլլայ, քիչ օգուտ ունի մշակելը, նաև քիչ օգուտ ունի ծառերուն բոլորտիքը փորելը : Չարժեք մշակել խեղճ, վար տեսակէ, թթու և յարդչունեցող խնձորները : Կրնաք փորել անոնց բոլորտիքը, կրնաք յօտել զանոնք, կրնաք ընել անոնց ինչ որ ուզէք, և սակայն անոնք տակաւին նոյն անարգ, անարժէք և անպիտան ծառերը կը մնան : Բայց եթէ պատուաստէք զանոնք, այն ատեն ամէն բան կը փոխուի, և այն ծառերը որ միայն թթու և լեղի պտուղ կը բերէին, կը սկսին անուշ, համեղ և զովարար պտուղ բերել :



ՄԱԳԻԱՂԱ

նիքն էր : Մագդաղենացին իր Տէրոջ մէն շնորհակալ ըլլալու մասնաւոր պատճառ մը ունէր : Յիսուս անկէ եօթը սուկարի դէ հանած էր :

Ո՞վ կրնայ չբիտել անոր երախտագիտութիւնը որ ցուցուց Յիսուսի՝ իր անձնանուէր ծառայութեամբ : Մարիամ Մագդաղենացին իր ստացուածքովը կը ծառայէր Յիսուսի, և անոր խաչին քովը կայնողներէն մէկն էր : Ներկայ դասուեցաւ անոր թաղմանը, և անոր գերեզմանին դիմացը նստած կը սպասէր : Առաջին անգամ ինքն եղաւ իր յարուցեալ Տէրը ողջունողը երբ նա խորտակեց մահուան շղթաները և «գերութիւնը գերի բռնեց :» իր երախտագիտութիւնը ցուցնելու ջերմ փափաքը մեզի սիրելի կ'ընէ զինք :

պիտի բերէ : Խնձորի ծառերը սերմին հաւատարիմ չեն, այսինքն՝ ճիշդ այն չեն ինչ որ յառաջ պիտի բերէր սերմը : Խնձորէ մը առնուած տասներկու սերմերը կրնան տասներկու տարբեր տեսակ խնձորներ յառաջ կ'ուզեն խնձորի ծառեր հասցնել, սերմ կը ցանեն, բայց ծառերուն յերևան գալէն ետքը երբեք անոնց պտուղ բերելուն չեն սպասեր տեսնելու համար անոնց պտուղին տեսակը : Հոգ չեն ըներ թէ ի՞նչ պտուղ կը բերեն : Սա գիտեն թէ պտուղները խեղճ և վար տեսակէ բաներ կ'ըլլան, և ուստի միայն կը նային թէ ի՞նչ պտուղ կ'ուզեն : Երկայն կարգ բրու մէջ խընձորի սերմեր կը ցանեն, և երբ ծառերը կը բուսնին և կ'աճին, անոնց

անարգ, անարժէք և անպիտան ծառերը կը մնան : Բայց եթէ պատուաստէք զանոնք, այն ատեն ամէն բան կը փոխուի, և այն ծառերը որ միայն թթու և լեղի պտուղ կը բերէին, կը սկսին անուշ, համեղ և զովարար պտուղ բերել :

ԼԵՄՄԻՆԿ

Այս հետաքրքրաշարժ փոքրիկ կենդանին որ կը կոչուի Լէմմինկ, հիւսիսային Եւրոպայի կենդանիներէն է, Եւրոպայի մէջ տեղ տեղ յանկարծ կ'երևնայ մեծ բազմութիւնով: Տասներկու տասնըտրս տարին անգամ մը Լէմմինկները խումբերով կը տարածուին երկրին երեսը, և մէկը չգիտեր թէ ուրի՛ք կու գան կամ ո՛ւր կ'երթան: Ահագին բազմութիւններ շարունակ յառաջ կը քարն, երբեք բանէ մը չեն արգելուիր, և կ'ուտեն կը լափեն ամէն ուտեստ որ ճամբուն վրայ կ'երլէ իրենց առջև: Անոնց անցնելէն ետքը երկիրը այնպէս կ'երևայ իբր թէ մարտիններու բազմութիւն մը անցած է անկէ: Վասն զի ամէն կա-

Շարունակ կը պակտի անոնց թիւը մինչև որ վերջապէս ծով կը հասնին, ուր առջևէ գացողները ետևէ եկողներէն մղուելով, մեծ մասը ջուրը կը քշուին, և ծովեզերք հասնելու անկարող ըլլալով կը կորսուին շուտով: Լէմմինկը շատ փոքր կենդանի մըն է, մարմնին բոլոր երկայնութիւնը վեց մատնաչափէն քիչ աւելի է: Սևի մօտ թուրի գոյն ունի:

ՔՔԱՆ ԹԱՇԿԻՆԱԿԻ ՄԸ ԻՐ ՎՐԱՅ ԸՐԱԾ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

«Ժամանակաւ» ըսաւ Գթման թաշկինակը, «Երեսուներհինգ մատնաչափ բարձրութեամբ փոքրիկ տունկ մըն էի: Ունէի սիրուն փոքրիկ կապոյտ ծաղիկներ շատ կակուղ և փա-



ԼԵՄՄԻՆԿ

նաչ տերև լափած կ'ըլլան այն անօթի փոքրիկ կենդանիները: Զառ ի վեր ժայռէ կամ պապէ դատ բան մը չկրնար արգելել Լէմմինկներուն ընթացքը: Երբ գետի մը կամ լճի մը կը հանդիպին, կը լողան անոր մէջ և չերևնար թէ դժուարութիւն կը կրեն ջուրին մէջէն անցնելու մասին: Անմիջապէս կը յարձակին ամէն կենդանի էակի վրայ և կ'երևնայ թէ երբեք հոգ չեն ընել վտանգը: Որովհետև անթիւ բազմութիւն են, շուտով կը յաղթեն ճամբուն վրայ հանդիպող ամէն արգելիչ: Մինչև անգամ կրակը անկարող է կասեցնել անոնց ընթացքը: Զամբորդութեան մէջ անոնցմէ շատեր կը սպաննուին զանազան գազաններէ և գիշատիչ թռչուններէ, որոնք կը հետևին իրենց և կը բռնեն խումբին ետևը գտնուողները:

Փոքրիկ գիւղի մը մէջ կը բնակէի իռլանդացի հիւսիսային մասին մէջ և շատ երջանիկ էի: Հազիւ ծաղիկներս թափեցան և սերմերս սկսան հասուննալ, մարդիկ եկան հանելոցի չորս կողմն գտնուած տունկերը: Վախցայ որ չըլլայ թէ զիս ալ հանեն: Ինձի մօտեցան: Վերջապէս ինձի ալ եկան և մէկ քաշելով հանեցին զիս ալ: Յետոյ իբր մէկուկէս ոտք երկայնակուաներով մեծ երկաթ սանտր մը առին և քերեցին բոլոր կեղևներս, և, հաւատացէք, շատ անտանելի ցաւ զգացի: Ետքը իմացայ որ այդ մեծ սանտրը քթանի սանտր էր: Այնուհետև իմ ցողուններս արմատներով մէկտեղ դրուեցան յիսուն ոտք երկայն, ինը ոտք լայն և չորս ոտք խոր լճակի մը մէջ: Արմատներս վարէն կապուեցան և յետոյ քթանի փունջեր յերևան եկան վրաս: Արմատներուս

վրայ փակած հողի կոշտերը դատուեցան և ես լաւ մը կակուղցայ: Զուրը դրուեցաւ իբր երկու շաբաթ ետքը դուրս հանուեցայ միւս քթաններուն պէս, և արտի մը մէջ դրուեցայ իբր տասնհինգ օր ևս: Յետոյ միւս քթանները և ես մանր խուրձեր շինուեցանք, շտիչ մեքենային բերանը արուելու պատրաստ: Չեմ կարծեր թէ գիտէք թէ ինչ է այս մեքենային բարձր: Բացատրեմ: Այդ մեքենան քթանին մանրաթելերը կը դատէ փայտէ մասերէն, և շուկան տարուելու յարմար վիճակի մէջ կը դնէ:

Մովորական, ջուրը դրուած քթանին համար երկու գործողութիւն կատարել հարկ է: Նախ կոտորուի, յետոյ դառն: Եւ ասոնք կ'ըլլան կամ ձեռքով, կամ փոքր մեքենայով մը որ կը շարժի շոգիով կամ ջուրով: Ծաս մը գործողութիւններէ անցայ: Ի վերջոյ հիւսուելով եղայ փոքրիկ թաշկինակ, ինչպէս որ կը տեսնէք զիս հիմա: Արկղի մը մէջ պիտի դրուէի և ինձ թոյլ պիտի չարուէր լոյս տեսնել երկար տան: Ամենէն ետքը ինքզինքս գտայ կոտանդնուպոլիս վաճառատան մը մէջ: Տիկին մը եկաւ և զիս դնեց իր փոքրիկ աղջկան համար: Տասը տարեկան տղայ մը գրած է այս պատմութիւնը:

ՓՇՐՈՒԱԾ ԱՄՄԱՆԸ

Ուէճվուտ կոչուած համբաւաւոր խեցեղէն անօթներու գործարանին տէրը որ կ'ապրէր այս դարուն սկիզբը՝ նշանաւոր կարողութիւնով օժտուած մարդ մըն էր, նաև ջերմեւանդ և պատուաւոր քրիստոնեայ մը: Անգամ մը գէշ վարքով, և յայտնապէս անաստուածութիւն դաւանող, մարդ մը գործարանին մէջերը կը պտրտէր Ուէճվուտի հետ: Իրենց կ'ընկերանար նաև պատանի մը, բարեպաշտ ծնողաց որդի, որ գործաւորներէն մէկն էր: Այդ անձը, Լորտ Բ., պատեհութիւնով մը սկսեց ծաղրել կրօնքը: Պատանին ի սկզբան ապշած նայեցաւ, յետոյ հետաքրքրութեամբ մտիկ ըրաւ, և ի վերջոյ բարձրաձայն ծիծաղեցաւ:

Ուէճվուտ բան մը չըսաւ, բայց շուտով գտաւ առիթ մը, աման շինելու գործողութիւնը ցուցնելով իր հիւրին: Յուշուց թէ այն փափուկ շաղախին ինչ մեծ զգուշութիւնով չքնադադեղ և գիւրաբեկ ամանի մը ձևը կը տրուէր, թէ ինչպէս կը նկարագործուէր հանձարեղ արուեստաւորներու ձեռքով, և

Թէ ի վերջոյ հնոց կը դուրսէր և անկէ դուրս կը հանուէր ձեռով կատարեալ և յատկութիւնով մաքուր: Լորսը իր սքանչացումը յայանեց, և ձեռքը երկընցուց ամանը առնելու համար, բայց բրուտը (չօճէճէ) գետինը նետեց զայն որ հազար կտոր եղաւ:

«Մենեղեղի անհոգութիւն մըն էր այդ» ըսաւ Լորս Գ. բարկութեամբ, «ես կ'ուզէի այդ անօթը տուն տանիլ և հաւաքածոյիս մէջ դնել: Բան մը չկրնար նորէն առջի վիճակին փոխել զանիկա»:

«Ոչ: Դուք կը մոռնաք, տէր իմ», ըսաւ Ուէճվուտ, «Թէ ճիշդ հիմա մենէ բաժնուող այն պատանիին հոգին մաքուր եկաւ աշխարհ, թէ աւոր ծնողքները, բարեկամները և բոլոր բարի ազդեցութիւնները գործած են անոր ամբողջ կեանքին մէջ որպէս զի իր Տէրոջը օգտակար ըլլալու յարմար աման մը ընեն զանիկա, և թէ դուք մէկ անգամ մը զայնով պարապը հանեցիք տարիներէ հետէ արուած աշխատութիւնները: Մարդկային ձեռք մը կարող չէ նորէն իրար բերել ինչ որ դուք փրեցիք»:


Լորս Գ., որ ատկէ առաջ երբեք յանդիմանութիւն լսած չէր իրմէ վար եղող մէկէ մը, լուրթեամբ Ուէճվուտի վրայ նայեցաւ: Թեոյ, «Դուք շատ բարի մարդ մըն էք», ըսաւ ազատորէն, իր ձեռքը երկնցնելով: «Էս երբեք չխորհեցայ խօսքերուս հետեւանքին վրայ»:

ՊՈՒՊՐԻԿՆԵՐՈՒ ՍԵՐԱՀԱՐ ՇՈՒՆ ՄԸ

Անդդիոյ Պիրմինկհէժ քաղաքին մէջ շուն մը կայ որ պուպրիկներու (պէպէ) սիրահար է: Այդ շունը կը վերաբերի տիկնոջ մը: Անոր փոքրիկ աղջկներէն մէկը իր պուպրիկը պարտցնել սորվեցուց շանը, և կենդանին լաւ մը վարժուեցաւ փոքրիկ աղջկան սիրելի խաղալիկը առնել պարտցնել: Շունը ժամերով կը պարտցնէր պուպրիկը, և շատ անգամ ալ իր խշտեակը (բոյնը) կը տանէր զայն և անոր քով կը պառկէր օրուան մեծ մասը: Երբեք դաս չէր տար պուպրիկին, ոչ ալ անոր հանդերձներուն: Շան այս սովորութիւնը հետզհետէ զօրացաւ իր մէջ և ինք այնքան համբաւ վատրկեցաւ որ դրացիներուն փոքրիկ աղջկները շատ անգամ անոր տիրոջ տունը կու գային և տան տիկնէն կը խնդրէին որ շունը գայ և իրենց պուպրիկը պարտցնէ:

Բայց հետզհետէ կենդանիին պուպ-

րիկներու այդ սէրը այնքան զօրացաւ որ մոլութեան փոխուեցաւ, և հիմա այդ պատճառաւ այն բոլոր թաղին մէջ անկէ աւելի ատելի կենդանի չկայ: Շունը գոհ չըլլալով իրեն յանձնուած պուպրիկները պարտցնելէն, սկսած է պարտել թաղին մէջ և բռնի յարկառակել մանուկներուն ձեռքէն անոնց պուպրիկները: Երբ և ո՛ր որ գտնէ պուպրիկ մը աղջկան մը ձեռքը, գողունի կերպով կ'երթայ կը յարկառակէ զայն և վազելով կը տանի իր բոյնը: Օր եղած է որ չորս պուպրիկ գտնուած է բոյնին մէջ, և կրնաք մտածել թէ անոնց փոքրիկ տէրերը ո՛րչափ կը բարկանան շանը դէմ:



ՇԵՐ ՄԱՅՐԸ ՊԱՏՈՒՈՂ ՏՂԱՅ ՄԸ

Շէքակոյի Աշխարհահանդէսին մէջ տեսնուած ամենէն գեղեցիկ բանն էր անուառը աթոռի մը վրայ նստած կին մը, կ'ըսէ ականատես մը. աթոռը կը քէր անոր օրդին: Կնոջ ճերմակ մաշկերը և հոգերէ խորշմած երեսները կը ցուցնէին թէ եօթանասուն տարեկանէ աւելի էր: Անոնց հագած պարզ զգեստը կը վկայէր թէ երկուքն ալ հարուստ չէին ստակի կողմանէ, բայց մայրը հարուստ էր ուրախութեան կողմանէ և որդին կրեստսէ աւելի հարուստ էր մայրը երջանիկ ընելու փափաքին կողմանէ: Թերևս պիտի մոռնամ Աշխարհահանդէսին մէջ տեսնուած շատ մը զարմանալի բաները, բայց երբեք պիտի չմոռնամ սեւեր հագած այն փոքրիկ ծեր կինը որ հանգիստ նստած էր թաւալող աթոռին վրայ, իր ցընձութիւն ճառագայթող դէմքը ճերմակ մազերէ ձեւացած ըլսապսակին ներքեւէն, մինչ իր հուժկու որդին ծռելով կ'ըսէր անոր թէ նոր զարմանալիքի մը կը մօտենային: «Եկա՞ծ ենք հոն, տղաս», կը հարցնէր կինը անձկութեամբ: «Այո, մայր», կ'ըսէր որդին ժպտելով մօրը մանկական ուրախութեան համար, «և ի՞նչոք այս անգամ շունչդ պիտի բռնուի զարմանքէդ»: Կինը ծիծաղեցաւ աղջկան մը պէս, և որդին քրքիլը չկրցաւ զսպել երջանիկ սողի մը պէս մինչ յառաջ կ'երթար, չխորհելով թէ ամէն մարդ զիրենք կրնար տեսնել: Թերևս ուրիշ ոչ ոք տեսաւ անոնց երջանկութիւնը, բայց որդին այնպիսի վիճակի մը մէջ կը գըտնուէր որ նախանձեցայ: Ո՛հ, այն հպարտ քայլերը, մինչ նա յառաջ կը քէր թագուհիին կառքը. աշխարհ իրենն եղած էր: Ո՛հ, մօրը այն հպարտ նայուածքը, մինչ աթոռին վրայ նստած

կ'անցնէր բազմութեան մէջէն, մարդոց ամենէն ազնիւին հետ, այնպիսի մէկու մը հետ որ կը պատուէ իր մայրը: Ո՛րչափ աւելի ազէկ եղաւ այդ ստակին այսպէս ծախսուելը, քան ոսկի և արծաթ ծախսելու համար սպասելը մինչև որ մայրը մեռնէր միօրինակ կեանքով, և յետոյ ստակը ծախսուէր անոր գերեզմանին վրայ տապանադիր պատրաստելու համար:

ԴԵՂՁԱՆԻԿԻՆ ՀԱՅԵԼԻՆ

Ասկէ քիչ ժամանակ առաջ կին մը դեղձանիկ (բաւարէս Գաւար) մը գնեց թուշուն ծախողի մը խանութէն: Դեղձանիկը սովորած էր խանութին մէջ գտնուած միւս դեղձանիկներուն ընկերութեանը, մինչ զինք գնող կնոջ տան մէջ բարորակին առանձին էր: Գեղեցիկ երգիչը շատ կը տանջուէր իր վայելած նախկին ընկերութեան մէջ գտնուիլ փափաքելով: Ուստի ո՛չ կ'երգէր և ո՛չ կ'ուտէր, հապա կծկուած և տխուր կը կենար վանդակին մէջ և կը թուէր թէ կը հալէր կը մաշէր: Տան մէջ գտնուողները կը խօսէին հետը, և կը ջանային կրցածնին ընել թուշունը զուարթացնելու համար, բայց պարապ տեղը: Բանը այն սատիճանին հասաւ որ տիկինը ուրիշ միջոց չտեսնելով՝ որոշեց թուշունը տանիլ նորէն Բայք բարեկամ մը, «Հայելի մը դրեք քովը», ըսաւ: Տիկինը ձեռքի մեծութեամբ կտորած հայելիի կտոր մը կապեց վանդակին դուրսը: Ասոր վրայ թուշունը թառէն վար ցատկեց գրեթէ անմիջապէս, և հայելիին մօտիկն երթալով՝ մէջը նայեցաւ և մեծ ուրախութիւն ցուցուց: Սկսաւ ճառագայթել և ցատկըտել վանդակին ամէն կողմը և քաղցրաձայն երգել իր բոլոր գեղեցիկ երգերը: Անկէ ետեւ ալ տխրութիւն չցուցուց: Հիմա ժամանակին մեծ մասը հայելիին առջև կ'անցընէ, և երբ դիչերը քնանայ, կ'երթայ որչափ որ կրնայ հայելիին մօտը կը թառի, հաւանականապէս մտածելով թէ իրեն յաճախ տեսած այն գեղեցիկ թուշունին մօտիկը կը գտնուի:



Ամերիկայի Միտչանարայ
Արտօմատէր
Տնօրէն—Խմբագիր
Ֆինանսներու Եղբայրներու
ԿՈՍՏԱՆԴՆՈՒԴՈՒԼԻՆ
Ի ՏԳՐԱԿՆԻ Ա. ՕՍԿՈՐ ԳՕՍԱԶՆԱՆ